

բումներէ պաշտպանել. Այս դասը պէտք է որ ապագային մէջ ամենուն ալ խրատ մը ըլլայ.

Սակայն ինչպէս կրնէ առածը. լաւ է անաղան քան երբէք: Հռովմէական հայ հասարակութիւնն ուր ուրեմն բողոքել սկսաւ, եւ իր բողոքները թէ պաշտօնապէս եւ թէ հրատարակման միջոցաւ կը շարունակէ: Իսկ Գեր. Հասունեան մինչեւ հիմայ ըրածները վաւերացնել տալու յուսով եպիսկոպոսական ժողով մը գումարեց: Թերեւս եկեղեցականներէն աւելի կողմ հնազանդութիւն կըսպասէր. Թերեւս կը կարծէր որ եպիսկոպոսներն իր Հռովմէ ստացած իշխանութիւնը մերժելու քաջութիւնը չէին կրնար ունենալ, եւ այն ատեն ամեն բան կարգի կը մանէր, ժողովրդեան ծայնը եթէ բոլորովին չը մարէր, զոնէ ազդեցութիւնը կը կորուսանէր թէ Բ. Գրան եւ թէ Հռովմէ առջեւ, երբոր եպիսկոպոսներն ալ միահամուռ Գեր. Հասունեանի կողմը բռնէին: Այս ակնկալութիւնները եթէ կային, հիմայ ի դերու երած են. էպիսկոպոսաց մեծադոյն մասը խնդիրն ուրիշ կերպիւ կը նկատեն եւ ժողովրդեան կողմը կանգնելու միտումներ ցոյց կուտան. առանց Հռովմէի գէտ ապստամբելու, որոյ վախճանն անկէ բաժանում միայն կրնայ ըլլալ, եղած իրողութեանց բոլոր պատասխանատուութիւնը Գեր. Հասունեանի վրայ կը ձգեն, պատճառ բռնելով թէ Գեր. Հասունեան ժողովրդին կամքն իր ուզածին պէս ցոյց տալով Հռովմէ համոզած եւ կաթողիկոսական ու պատրիարքական իշխանութեան հասած էր, ինչպէս որ ետքն ալ Բ. Գրան համոզելով հրովարտակ մեղք բերած էր:

Բայց ինչ որ ալ ըլլայ խնդրոյն այս կերպիւ նկատման ելքը, անյողողոյց ցանք եւ յարատեւութիւն պէտք է գոհացուցիչ արդիւնք մը ձեռք բերելու համար: Հռովմէական հայ հասարակութիւնն առ այժմ մեծ եռանդեամբ իր բողոքները կը պնդէ, եւ հրատարակութեանց միջոցաւ ալ ի լուր աշխարհի կը հնչեցնէ: Մէծմուայի Հալատիս (*) քաղիքը քանի մը դրուածիւն-

(*) Այս լրագրին խմբագիրը Հռովմէական է. եւ իւր ազատամտութեամբ, Հայ Ազգութեան ու Հայրենեաց անուան ու իրաւանց եպիսկոպոսի ու հաւատարիմ անձնակալ իրութեամբ արդարեւ արժանի կը հանդիսանայ հոմայն մեր սիրելի Ազգայնոց յարգանաց ու համակրութեանց. եւ բաւեալադրեմք այսպէս ճարտանալէ միջ:

ներ հրատարակեց, որոցմէ կը տեսնուի թէ ժողովուրդը խնդիրը հիմէն բռնած է. Գեր. Հասունեանի հրաժարումը կը պահանջէ, եւ Կ. Պօլիս գումարուած եպիսկոպոսներէն ալ կը խնդրէ որ ժողովրդական կամոց Թարգման եւ դործադիր ըլլան: Ասանցմէ զատ առանձին գիրքեր եւ տնտրականք ալ հրատարակուեցան, որոց վրայ ուրիշ անգամ կը խօսինք:

Այս մեծ եւ դրիթէ ընդհանուր շարժման գէտ անշուշտ մեծամեծ ալ արդիւնքներ կան, որոց ամենէն զիստորն ու նշանակութեան արժանին այս է որ ժողովուրդը կատարուած իրողութեան մը (Ֆէթաքոմբի) գէտ կը մըցի: Բայց պէտք չէ մոռնալ թէ հրչափ յաղթութիւնը դժուարին ըլլայ, անհափ փառաւոր կըլլայ, ուստի բողոք ու պատերազմ բռնաբարութեան գէտ:

Արդէն Գեր. Հասունեանի սակաւամիւ կուսակիցները ժողովրդական հզօր ծայնին առջեւ դիմադրելու չեն համարձակիր եւ լռութիւն կը պահեն: Ահաւասիկ, ըստ մեզ, յաղթութեան առաջին նշանը: Բայց ենթադրենք որ ժողովրդեան ծայնը չի կրնար խնդիրն յարգել տալ, այսու ամենայնիւ բարոյական յաղթութիւնը միշտ ժողովրդեան է, բանդի իրաւունքն ու արդարութիւնն անոր կողմն է. եւ թեպէտ Գեր. Հասունեան իր մեղք բերած դահուռ վրայ մինչեւ ցվերքը բազմի եւ տիրէ, քանի որ ժողովուրդը զինքը չընդունիր, առանց մարմնոյ զլուխ մ'է: Այս աղբարագայիս մէջ իր յաղթութիւնն անգամ պարտութիւն մ'է ամեն արդարախօս միաբերու ինչպէս նաեւ անաչառ պատմութեան առջեւ: Մէկ բան մը միայն կրնայ զինքն արդարացնել, այն է կամովին հրաժարական տալ, եւ ժողովրդեան իրեն յանձնել չուզած իշխանութիւնն անոր վերադարձնել:

(Մատիս Թ. 909):

Պ. Մ. ՍԱՆՍՍԱՐԵԱՆՑ

Ս. Պ. ԲՈՒՐԳԻ ՀԱՅ ՌԻՍԱՆՈՂԻՐ

ԵՒ

ՆՈՅՆ ԳՐԱԴՐ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՔ

Մարդիկ երբ ընկերական սիրով մեծ պարտաւորութիւն ունին միմեանց միշտ օգնելու ամենայն պարագայից մէջ բաղմունքով մի-

ջոյններով, և այսպիսի արարաւորութիւնքը կատարողներ՝ մարդկութեան ճշմարիտ ընկերները ու բարեկամները, միանգամայն և անմահ հանդիսանալու իրաւունքը կ'ստանան, ուրեմն ի՞նչ արժանի է սակայն մարդոց, որոց զրեթէ՛ գլխաւոր ջանքերը ու նպատակները մի ընդհանուր Ազգի օգտին, լուսաւորութեան և յառաջագիւմութեան կը զոհուին:

Մորա լեռինն սրատասխանը թողլով՝ բանագիտաց, մեր համառօտիւ այսքան միայն կը փութամք պարզել, թէ այնպիսիքն ո՞չ միայն իւրեանց անհատական և սրբազան պարտաւորութիւնքը կը հասուցանեն, այլ մի ընդհանուր Ազգի լուսաւորութեան ու յառաջագիւմ զարգացման ամենակարեւոր պիտոյքը հոգալով, յաւիտեական և մշտնջենաւոր սնանդալի բարեբարքը կը հաշտուին, մանաւանդ մեր թշուառ և ընդհանրապէս ոչ զարգացեալ Ազգի ու Հայրենեաց նկատմամբ, որոյ կարօտութիւնք այնքան զգալի և անհրաժեշտ են, ինչպէս երկրի բարեբերութեան և պաղաւտութեան համար՝ յատկապէս արեւը և անձրիւնը:

Ճիշտ այսպէս և այսպիսի զգացմանց ու սիրադործութեանց եռանդով վառուած Ազգասէրներէն մին գրելով մեծ Պ. Մ. Սանասարեանց, իւր բաղմնապատիկ արդեանց և ազդօգուտ նպատակաց վրայ այս միջոցները՝ մի գովելի և երեւելի բարեբարութիւն ևս յաւելացնելով, հետեաբար ի պարտաւորութիւն շարժած է, զմեզ՝ հրատարակելով այդպիսի մի նախանձելի եռանդը և արդիւնքը, հրատարակաւ յայտնել մեր խորին ու ջրմեռանդն շնորհակալեաց հաւաստիքը առ իւրեքն:

Յիշեալ Ազգասէրը ջբաւականանալով Ս. Պ. Բուրգի Հայ ուսանողաց ումանց վա-

րայ ունեցած զանազան խնամքներէն, նոր մի այլ գեղեցիկ և բարեկացաւիթ անձուկ կը յղանայ ազգանուէր սրտին մէջ, և յիշեալ ուսանողաց աշխոյժ, յորդոր ու քաջալիկութիւն կը ներդրծէ, ազգի ազգի դասադրեանք՝ աշխատասիրելու ի գատնարակութիւն և ի լուսաւորութիւն սիրելի Ազգիս, միանգամայն խոստանալով իւր սնագահան արդեամբ և ծախիւք ապիւ տալու, ինչպէս որ սուղ միջոցի մէջ այս տարի նոյա երկասիրած ՎԱՅԵՐԷՆ ԿԱՐԳԱՆԻ ԵՒ ԳՐԵՆՈՒՍՈՒՑԱՆԵՆՆԻ ՀԻՄՆԱՆԵՐԸ Եւ ՔՈՒՄԱՐԱՆՈՒԹԻՒՆԸ ապիւ տուած է:

Ուստի քաղցր պարտաւորութիւն կը դրամք մեր ի սրտէ խորին շնորհակալութեանց հաւաստիքը՝ Արարատի միջոցաւ յայտնել վերոյիշեալ Ազգասիրին, որ այսպիսի ազդօգուտ նպատակաւ մանաւաճառապէս երկու տեսակ փնտ՝ բարութեանց առիթ կը հանդիսանայ: Ասին, փան զի՛ ինչպէս վերը յիշեցինք, ի լուսաւորութիւն և ի հաստնարակութիւն Ազգիս խանդակաթ սրտիւ բորբոքուած, ինչպէս ամեն հնարք և միջոցք ի գործ կը գնէ, նոյնպէս կը ջանայ լաւ դասադրեանք մատակարարել՝ ուսսատանի Ազգայնոց այդ մասին մեծ պատիւութիւնքը լրացնելու համար՝ ի գիւրութիւն Հայ մանկուոյն, և տալի իւր ծախքով: Բւրգ՝ փան զի, բարի եռանդ ունենալով Հայ Ուսանողաց մտաց քաջ լուսաւորութեան և զարգացման, մանաւանդ մայրենի լեզուին մէջ քաջալարժ կը թուութեան նպատակ, և նոյա ստացած քանքարները յայտնել և նուիրել Ազգիս, յորդոր և ձեռնառու կը հանդիսանայ նոյա՝ աշակցութեամբ և խորհրդով մեծապատիւ Պ. Ս. Աղեանց Ազգասիրի: Որով նոյա անշուշտ հետզհետէ առաւել կալեոր, ըն-

տիր և կատարեալ դասագրեանք աշխատասիրելու պիտի խրախուսուին : Թողումք յիշել ուրիշ շատ օգուտները, որոց ևս առիթ կը լինի Պ. Սանասարեանց : Ուստի և իրաւամբ կը զրաւէ ինչպէս մեր, նոյնպէս համայն Ազգիս զոհունակութեանց հաւատարմք :

Նոյնպէս շնորհակալութիւն կը մատուցանեմք առ պարոն Ուսանողս Ս. Պ. Բուրգի, որ ցանկանալով իւրեանց պարապոյ ժամերն նուիրել յօգուտ և այլն Հայ մանկուոյն կը ջանան մեր Ազգի դպրոցաց դասագրեանց պակասութիւնքը լրացնել, որով իւրեանց առ Ազգն ունեցած պարտաւորութիւնքը կերպիւ իւրք վճարած կը լինին :

Իսկ ՎԱՅՅԵՐԷՆ ԿԱՐԳԱԼ ԵՒ ԳՐԵԼ ՈՒՍՈՒՑԱՆԵԼՈՒ ՀՐԱՀԱՆԳԻՆ, և ԹՈՒՍԲԱՆՈՒԹԵԱՆ, մասին այսչափս բաւական է ասել, որ ըստ կարեւորութեանց՝ խիստ յարմար և ղիւրին եղանակ կարող են թէ՛ դասատուաց և թէ՛ դասառուաց ընծայել՝ քիչ միջոցի մէջ մեծ արդտաւք և յառաջադիմութիւն ցոյց տալ. որով արժան է, որ յիշեալ դասագրեանքը մեր ամենայն ուսումնարանաց և դպրոցաց ընդունելի լինին. ուստի անշուշտ եմք, որ նոցա պորձածութիւնը կ'ընդհանրանայ :

Ս.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Արժան կը համարիմք հետեւեալ թղթառաջըրը այսինքն գրութեանց խորագրերը առ թագաւորն Հայոց, առ թագաւորահայր Պարոնն, առ ընդհանուր Ապարապետն (գունդատալ). առ Տիկինն և առ կոյս կրօնաւորն, ս. Աթոռոյս զբառան մի հին ցեղազրբէ քաղելով նուիրել ի տեղեկութիւն բանադէտ Հնասիրաց : Զեւազորին վերջը լինելով, և թղթեր պակաս, հետեւորտը յայտնի կերելի այս թղթառաջից այլ ևս այլ

անձանց վրայ ևս շարունակութիւն ունենալը. քայքայ աւաղ, կամ անդգուշութեամբ և կամ որպիսի եւ իցէ պատահմամբ անկեալ կամ պատռեալ կորուսուած է. եւ այսքանը միայն կը մնար, զոր ներկալ ամսագրովս իղծ կալանք հաղորդել մեր ընթերցողաց :

Թղթառաջից պարունակած մի քանի պարագայքը նկատելով, այսպէս պէտք է իմանալ թէ յիշեալ օրինակները Ժ.-րդ, ԺԱ.-րդ և ԺԲ.-րդ դարուց մէջ զորժածուած ոճն է և նոյն ժամանակաց գրութիւններէն են մնացած :

ԹՂԹԱՌԱՋԻ

ԹԱԳ. — Տէրամբ Յիսուսի՝ 'ի փառս պարծանաց Գլխոյն Վրիստոսի՝ ահարկու և յաղթող 'ի վերայ թշնամեաց խաչին Վրիստոսի, աստուածընտիր սուրբ Թագաւ. :

ԹԱԳ. — Ի հմանց(1) հնոց և 'ի նախնեաց բարեաց ընձեղեալ շառաւիղ բարի տնկեալ 'ի տան տեառն և 'ի զաւիթս աստուծոյ, հանդիսական հաւաքմամբ 'ի կոչմանէ վնհին նախակարգեալ 'ի թագաւորական պատիւ ճոխութեան Բարեպաշտ և աստուածասէլ՝ Թագաւ. :

ՊԱՐ. — Լրումն և աւարտ կամացն աստուծոյ, սիրտ նորին և կատարող անաչառ պատուիրանին, աստուածամեծար ճոխութեամբ զերապատուեալ քան զնաւս հանուրց ամենից կարգեաց այնոց(2) կարգաւորիչ և ուղղիչ, մեծիմաստ և բազմահանձար, աստուածագութ իշխանաց Աշխան պար. Ի. Ե. Հեթ.(3) և Թագաւորահայր

(1) Գուցէ, է հինգ. ըստ որում զուրկ է ի նշանակութենէ, բառս այս ի հինգ :

(2) Ըստ այսմ էր յօրինակին, զոր մեր դժուարացար լուծանել, ուստի և յանձնեմք բանադիտաց :

(3) Այսպիսի էր զրեալ յօրինակին. զորոց զոտաջինն պէտք, պարտէ իմանալ պէտք. զերկրորդն,